

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ
ՀՐԱԶԴԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ <<ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՀԵՏԱԴԱՐՁ
ԼՈՒՅՍԸ>> ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ**

Հարգարժան հյուրեր,

Սիրելի՛ աշակերտներ,

Հարգելի՛ ներկաներ,

<<Փարաջանովի հետադարձ լույսը>> խորագիրն ունեցող միջոցառումների շարքը կարելի է իրավամբ համարել մեր դպրոցականների շրջանում ինքնատիպ կրթա-մշակութային ձեռնարկ, որն իր գեղագիտական բնույթից բացի ունեցավ նաև ուսումնա-դաստիարակչական կարևոր նշանակություն:

Այս նշանակալի միջոցառումն ամիսներ շարունակ իր ինքնատիպ ոճով հագեցրեց մարզի դպրոցականների առօրյան և այսօր արդեն բոլորս միասին հանրագումարի ենք բերում կատարվածը՝ կազմակերպելով մեր սաների անհատական աշխատանքների մրցույթ-ցուցահանդեսը:

Պատիվ ունեմ Ձեզ փոխանցելու նաև ՀՀ Կոտայքի մարզպետ պարոն Հարությունյանի շնորհավորանքը այս միջոցառման կապակցությամբ և փաստել, որ պարոն Հարությունյանի կողմից մեծապես կարևորվում են նմանատիպ միջոցառումները:

Այս ծրագրի նպատակը շատ հստակ էր և մեր ժամանակների համար բավականին կարևոր՝ պատանեկության տարիքում գտնվող երիտասարդության շրջանում խթանել մշակութային հաղորդակցման միջավայրի ակտիվացումը, ձևավորվող սերնդին հնարավորություն տալ բացահայտել ներքին ստեղծագործական ներուժը, արվեստի դրսևորման բազմազանության միջոցով ազատորեն արտահայտել իրենց աշխարհընկալումն ու մտածողությունը, զարգացնել ավանգարդ արվեստի դրսևորման նկատմամբ սեփական մոտեցումներ կրելու ունակությունները:

Կարծում եմ, որ մենք համատեղ ուժերով կարողացանք հնարավորինս հասնել այս նպատակի իրագործմանն ու այսօր նպատակային այդ շեշտադրումները ներկայացնում ենք արվեստասեր հասարակայնությանը:

Շնորհակալությամբ ենք ողջունում ՀՀ Ազգային Ժողովի հարգարժան պատգամավորների ներկայությունը մեր այս միջոցառմանը, շնորհակալություն ենք հայտնում մեր հարգելի Ժյուրիի անդամներին և հատուկ շնորհակալություն բոլոր այն աշակերտներին, նրանց կրթօջախներին և ուսուցիչներին, ովքեր հետաքրքրություն ցուցաբերեցին և ակտիվորեն մասնակցեցին <<Փարաջանովի հետադարձ լույսը>> խորագիրն ունեցող այս ձեռնարկին:

Շնորհակալություն.

12.09.2014 թ.